ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

27 սեպտեմբերի 2013թ.

Նախագահ՝ Ա. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի8 անդամներ: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ***2013-14թթ. ուս. տարվա ամփոփիչ քննությունների հարցաշարերի, ավարտական աշխատանքների թեմաների հաստատում:***
   /Մ. Ա. Զաքարյան, Ա. Զ. Ալավերդյան/

1. ***2013-14թթ. ուս. տարվա կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:***
   /Մ. Ա. Զաքարյան, Ա. Զ. Ալավերդյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Ցուցուլյանը:

Զեկուցումով հանդես եկան «Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» և «Անտառագիտության» ամբիոնների վարիչներ Մ. Ա. Զաքարյանը և Ա. Զ. Ալավերդյանը: Ըստ ամբիոնների ներկայացնելով 2013-14թթ. ուս. տարվա ամփոփիչ քննությունների հարցաշարերը, ավարտական աշխատանքների թեմաները, նրանք միաժամանակ հաստատեցին, որ հարցաշարերը կազմված է ըստ անցած նյութի, իսկ ավարտական աշխատանքների թեմաները՝ յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխան: Յուրաքանչյուր ամբիոնում սահմանվել է ղեկավարների

հետ հանդիպման՝ կոնսուլտացիաների ժամանակացույց, որը հստակ իրականացվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ. Խ. Նավոյանը, Ա. Շ. Մարգարյանը: Նրանք ներկայացրին, որ ամփոփիչ քննությունների հարցաշարերի ավարտական աշխատանքների թեմաների բաշխումը կատարվել են ըստ կուրսերի, ըստ ղեկավարների և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇՈՒՄ-1. Հաստատել 2013-14թթ. ուս. տարվա ավարտական աշխատանքների թեմաները՝ ըստ մասնագիտությունների:

2. Հաստատել 2013-14թթ. ուս. տարվա ամփոփիչ քննությունների հարցաշարերը՝ ըստ մասնագիտությունների:

3. Հաձնարարել ամբիոնների վարիչներին /Մ. Ա. Զաքարյան, Ա. Հ. Մակարյան, Ա. Զ. Ալավերդյան/ ըստ ժամանակացույցի իրականացնել համապատասխան աշխատանքներ և կոնսուլտացիաներ ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների կատարման վերաբերյալ:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկան «Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» և «Անտառագիտության» ամբիոնների վարիչներ Մ. Ա. Զաքարյանը և Ա. Զ. Ալավերդյանը: Նրանք ներկայացրին նախապես կազմված կուրսային աշխատանքների թեմաները: Թեմաները դասախոսների կողմից կազմվել են անցած դասընթացների /տեսական, գործնական և լաբորատոր/ հիման վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- է. Կ. Օսիպովան, Ա. Ա. Շ. Մարգարյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇՈՒՄ- 1. Հաստատել կուրսային աշխատանքների թեմաները:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա.Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**